որոնցից մէկը փոխադրուած է Երեւանի Թանգարանը, այդտեղ եւս բազիլիկ չէնքի մնացորդ կա՞յ, թէ ոչ, ասել չենք կարող, լուսանկարը ստացել ենք Թորամանեանից, ինքներս այնտեղ չենք եղել։ Այս պատկերները ազգագրական տեսակէտով հետաքրքրական են, գուցէ եւ հեթանոսական շրջանից (Պատկ. 35-36)։ Կան եւ ուրիշները փչացած։ Ապա Զորագետի ափերով դէպի հիւսիս անցնելով Օձունի նշանաւոր կոթողն է եւ այնտեղից էլ մի քանի մղոն դէպի հիւսիս Լալուարի յետեւը, Բրդաձորի փոքրիկ բազիլիկայի մնացորդն է, կողքին փառաւոր, Աստանեան շրջանի շատ արժէքաւոր եւ մինչեւ այժմ կանգուն կոթողով, որին մօտ է նաեւ Խոժոռնին իւր բազիլիկայով եւ կոթողի մնացորդով։ Լոռի Բգահատ գիւղում նոյնպէս կայ մի նաւանի բազիլիկայի մնացորդ, այժմ բոլորովին աւերակ եւ նախապէս էլ փոփոխութեան ենթարկուած, որի ափսիդի աջ պատի մէջ մտցրած է գերեզմանական մի կոթող, մի երեսը տեսանելի, ուր Աստուածածինն է Յիսուս գրկին եւ աջ ձեռքը վեր բարձրացած,

Պատկ. 35